# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3960-Ա « 29 » սեպտեմբերի 2025թ.

ՍԱՄՎԵԼ ՀԱԿՈԲԻ ՌԱՖՅԱՆԻՆ
ԵՐԵՎԱՆԻ «ԿԱՐՄԻՐ ԲԼՈՒՐ» ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Երևանի քաղաքապետի 2019 թվականի փետրվարի 26-ի N 518-Ա որոշման հ.2 հավելվածի 75-րդ կետով և հիմք ընդունելով Երևանի «Կարմիր Բլուր» առողջության կենտրոն փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2025 թվականի սեպտեմբերի 26-ի «Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչելու մասին» N 5 որոշումը և մրցույթի արդյունքների հրապարակման թերթիկը՝

1. Սամվել Հակոբի Ռաֆյանին՝ 2025 թվականի հոկտեմբերի 1-ից նշանակել Երևանի «Կարմիր Բլուր» առողջության կենտրոն փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պաշտոնում, կնքելով նրա հետ աշխատանքային պայմանագիր 5 տարի ժամկետով՝ 2025 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2030 թվականի հոկտեմբերի 1-ը ներառյալ՝ ազատելով նրան նույն ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնից:

2. Աշխատավարձն՝ ըստ հաստիքացուցակի:

**ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**